ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ



Հովհաննիսյան Աշոտ Արթուրի

Ծնվել է 07.04.1987 թվականին Երևան քաղաքում: 1993-2003թթ. սովորել է Երևանի Հակոբ Օշականի անվան թիվ 172 անգլիական թեքումով դպրոց-վարժարանում: 2003-2007թթ սովորել Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում: 2007-2009թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2009-2011թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան: 01.08.2009 թվականից մինչև 30.11.2010 թվականն աշխատել է «Լանդրասիկ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 01.12.2010-04.05.2011թթ. աշխատել է «Սոֆթ Տրանս» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 13.05.2011-21.10.2013թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական: 22.10.2013-17.03.2014թթ. աշխատել է «Տոնէքս» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 18.03.2014-09.07.2015թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական: 10.07.2015-10.02.2016թթ. թվականին աշխատել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական: 11.02.2016-03.09.2017թթ. աշխատել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական: 04.09.2017 - 31.01.2019թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում որպես դատավորի օգնական: 01.02.2019 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանում որպես դատավորի ավագ օգնական: Երևանի պետական համալսարանում ուսումնառության ժամանակ՝ 2006 թվականին, սովորել և ստացել է «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների պահեստային միջին բուժաշխատողի» որակավորում և «Մինչբժշկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում» ՀՀ կրթության և գիտության և Առողջապահության նախարարությունների կողմից հատուկ ծրագրով դասընթացներն ավարտելու մասին վկայական: 2011 թվականին մասնակցել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից անցկացված ուսումնական դասընթացին, որի ընթացքում ձեռք են բերվել գիտելիքներ՝ անցկացվող փորձաքննությունների տեսակների, փորձագետներին առաջադրվող հարցերի ճիշտ ձևակերպման, բյուրոյում

իրականացվող փորձաքննությունների առավելագույն հնարավորությունների և փորձաքննությունների իրականացման հետ կապված այլ հարցերի վերաբերյալ: 2012 թվականին մասնակցել է ՀՀ փաստաբանների պալատի կողմից անցկացված գրավոր քննությանը, ինչի արդյունքում ստացել է 96 միավոր առավելագուն 100 միավորից, ընդգրկվել է քննության արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած հավակնորդների ցուցակում և հաղթահարել է բանավոր քննությունը: 14.07.2012 թվականին ստացել է փաստաբանի արտոնագիր և առ այսօր հանդիսանում է նաև ՀՀ փաստաբանների պալատի անդամ՝ արտոնագիր թիվ 1462 (արտոնագրի գործունեությունը կասեցված է պետական պաշտոն զբաղեցնելու պատճառով): ՀՀ վճռաբեկ դատարանում աշխատելու տարիներին մասնակցել է մի շարք սեմինարների, որի ընթացքում ինչպես ամրապնդվել են ունեցած գիտելիքները, այնպես էլ ձեռք են բերվել նոր գիտելիքներ: 2018 թվականին մասակցել է ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացված որակավորման գրավոր քննությանը, որի արդյունքում ստացել է 85 միավոր՝ առավելագույն 100 միավորից, ընդգրկվել է քննության արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած հավակնորդների ցուցակի առաջին տեղում և մասնակցել ՀՀ բարձրագույն դատական խորհրդում տեղի ունեցած հարցազրույցին: Տիրապետում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներին, ինչպես նաև տիրապետում է MS office, Internet, Irtek, Lite Insurance և Meysis համակարգչային ծրագրերին: Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Ջավախյան Աշոտ Լևոնի

Ծնվել է 10.10.1987թ. Երևան քաղաքում: 1994-2004թթ. սովորել է Երևան քաղաքի Նաիրի Զարյանի անվան թիվ 130 միջնակարգ դպրոցում: 2005-2009թթ. սովորել է Եվրոպական կրթական տրածաշրջանային ակադեմիայում՝ իրավագիտություն մասնագիտությամբ: 2009-2011թթ. անցել է պարտադիր զինվորական ծառայություն ՀՀ զինված ուժերում: 2011-2013թթ. սովորել է Եվրոպական կրթական տրածաշրջանային ակադեմիայում: Շնորհվել է իրավագիտության մագիստրոսի աստիճան: 2011-2013թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի գործավարի պաշտոնում: 2013-2017թթ. նշանակվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնականի պաշտոնում: 2016-2017թթ. սովորել է ՀՀ փաստաբանական դպրոցում: 21.05.2017թ.-ից առ այսօր հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան: 2017 թվականին հիմնադրել է «Էյ ընդ Զեյ փարթներս» ՍՊԸ-ն, հիմնադրման պահից մինչ օրս հանդիսանում է նշված ընկերության տնօրեն: Ամուսնացած է, ունի մեկ որդի:



Հազոյան Արտակ Սուրենի

Ծնվել է 25.12.1981թ. ՀՀ Լոռու մարզի Տաշիր քաղաքում: 1988-1999թթ. սովորել և ավարտել է Տաշիրի թիվ 2 միջնակարգ դպրոցը (ներկայիս՝ Արտակ Աղեկյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց): 1999-2003թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը: 2003-2005թթ. ծառայել է Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում: 2006-2009թթ. աշխատել է Ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնի անչափահասների գծով խմբում՝ որպես օպեր-լիազոր: 2010-2013թթ. սովորել և ավարտել է Սանկտ-Պետերբուրգի «РАНХиГС» (Российская академия народного хозяйства и государственной службы при Президенте Российскои Федерации) իրավագիտության ֆակուլտետի միջազգային հանրային իրավունք, եվրոպական իրավունք մասնագիտացմամբ՝ ստանալով մագիստրոսի որակավորում: 18.04.2014 թվականից առ այսօր աշխատում է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Տաշիրի նստավայրում՝ որպես դատավորի օգնական: Ամուսնացած չէ:



Հարությունյան Լիանա Վարդանի

Ծնվել է 1978 թվականի ապրիլի 23-ին Երևան քաղաքում: 1985-1995թթ. սովորել և ավարտել է Երևանի թիվ 76 ռուսական միջնակարգ դպրոցը: 1995-2000թթ. գերազանցությամբ սովորել և ավարտել է Երևանի ‹‹Գալիք›› համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, ստացել իրավագետի որակավորում: 05.06.2000-08.06.2001թթ. աշխատել է ‹‹Լազերային տեխնիկա›› ՓԲԸ-ի արտաքին կապերի և մարկետինգի բաժնում, որպես ինժեներ: 2001 թվականին մասնակցել է փաստաբանական գործունեության իրականացման համար անցկացվող որակավորման քննություններին և ստացել փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր: 2007 թվականի ապրիլից մինչև 2008 թվականի հունվարի 21-ը հանդիսացել է ՀՀ վճռաբեկ դատարանում գրանցված հավատարմագրված փաստաբան: 02.07.2001-21.01.2008թթ. աշխատել է ‹‹Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա›› հասարակական կազմակերպությունում, նախ՝ որպես իրավաբան, այնուհետև փաստաբան՝ դատական գործերով պատասխանատու: 2003-2004թթ. ընդգրկվել է ‹‹Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն›› հասարակական կազմակերպության Մարդու իրավունքների հայկական դպրոցի՝ ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար կազմակերպված մեկամյա դասընթացում և դասավանդել ‹‹Իրավունք›› առարկայաշարը: 06.02.2006-30.05.2006թթ. ‹‹Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա›› հասարակական կազմակերպությունում ‹‹Միջնորդ դատարանների և միջնորդ քննության զարգացումը ՀՀ-ում›› ծրագրի շրջանակներում նշանակվել է դասավանդող: 18.09.2006-31.12.2007թթ. աշխատել է ‹‹Լիգըլ ըլայընս›› ՍՊԸ-ում, որպես փաստաբան: 22.01.2008-12.03.2019թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ ՊԿՀ-ում, որպես ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի օգնական: 12.03.2019 թվականից տեղափոխվել է ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայություն, որպես գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար: Ամուսնացած է, ունի մեկ երեխա:



Սաղոյան Լիլիթ Գագիկի

Ծնվել է 23.02.1990թ. Երևան քաղաքում: 2006թ. ավարտել է Գավառի թիվ 3 միջնակարգ դպրոցը: 2010թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2012թ.՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի՝ մագիստրատուրան: 2018թ.-ին ավարտել է ՀՀ փաստաբանական դպրոցը, հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան /փաստաբանական գործունեության արտոնագիրը կասեցված է/: 2012թ մարտից առ այսօր ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնական: Գերազանց տիրապետում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներին: Տիրապետում է MS Office 2000,2003, 2007, 2010 (Word, Excel, Access Power Point) համակարգչային ծրագրերին: Մասնակցել է մի շարք մասնագիտական գիտաժողովների և սեմինարների: Ամուսնացած չէ:



Գաբրիելյան Լիլիթ Վագիֆի

Ծնվել է 22.01.1984թ. Երևան քաղաքում: 2004թ. ավարտել է Արցախի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2006թ.՝ մագիստրատուրան: 2007թ. սեպտեմբերից մինչև 2008թ. օգոստոսն աշխատել է Գրիգոր Նարեկացի համալսարանի իրավագիտության ամբիոնում՝ որպես դասախոս: 2007թ. ապրիլից մինչև 2008թ. հուլիս աշխատել է Արցախի պետական համալսարանում՝ որպես դասախոս: 2009-2011թթ. դասախոսել է Մեսրոպ Մաշտոց համալսարանում: 2004-2007թթ. աշխատել է ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհրդում՝ որպես մրցութային, ատեստավորման և վերահսկողության բաժնի 1-ին կարգի մասնագետ: 2007-2008թթ. աշխատել է ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությունում՝ որպես Մեթոդաբանության և իրավաբանական բաժնի պետ: 2008-2010թթ. աշխատել է ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանում՝ որպես Իրավաբանական բաժնի պետ: 2010-2012թթ. զբաղեցրել է Ստեփանակերտի քաղաքային տեսչության պետի պաշտոնը: 02.04.2012թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակում՝ որպես պահանջները քննող մասնագետ: Մասնակցել է մի շարք վերապատրաստման դասընթացների Լոնդոն, Փարիզ, Տորոնտո, Մայնց, Պրահա քաղաքներում: 2019թ. հունվարից հանդիսանում է միջազգային հաշտարարության ինստիտուտի կողմից որակավորված հաշտարարության փաստաբան: 2013թ. մայիսին Պրահայում մասնակցել է Տնտեսական համագործակցություն և զարգացման կազմակերպություն «Ֆինանսական կրթում» թեմայով կոնֆերանսին /Պրահա, Չեխիա/**:** 2014թ. հոկտեմբերին Գերմանիայի Մայնց քաղաքում մասնակցել է Գերմանական միջազգային համագործակցություն ընկերություն «Ֆինանսական կրթում» թեմայով դասընթացին /Մայնց, Գերմանիա/: 2015թ. հունվարին Տորոնտոյում մասնակցել է Օնտարիոյի օմբուդսմեն «Պահանջների առաջադեմ քննությունը» թեմայով դասընթացին /Տորոնտո, Կանադա/: 2016թ. հունիսին Մադրիդում մասնակցել է Միջազգային հաշտարարության ինտիտուտ «Աշխարհի հաշտարարության գագաթնաժողովին»: /Մադրիդ, Իսպանիա/: 2016թ. հոկտեմբերին Լոնդոնում մասնակցել է փաստաբանների միջազգային ասոցիացիա «Հոգեբանական հաշտարարություն» թեմայով որակավորման դասընթացին /Լոնդոն, Միացյալ Թագավորություն/: 2017թ. հունիսին Փարիզում մասնակցել է Առևտրի միջազգային

պալատ «Առցանց հաշտարարություն» թեմայով կոնֆերանսին /Փարիզ, Ֆրանսիա/: 2018թ ապրիլից մինչև 2018թ հուլիսը Լոնդոնում մասնակցել է Արբիտրաժի չարտերային ինստիտուտ «Միջազգային արբիտրաժում կիրառելի իրավունքը, ընթացակարգը և նախադեպերը՝ մոդուլ 1» որակավորման դասընթացին /Լոնդոն, Միացյալ Թագավորություն/: 2018 թվականի հոկտեմբերին Լոնդոնում մասնակցել է Մաստերքարտ ակադեմիա «Քարտային զեղծարարությունների գումարների հետգանձում» որակավորման դասընթացին՝ 2-րդ մակարդակ /Լոնդոն, Միացյալ Թագավորություն/: Տիրապետում է հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներին, Windows XP, Windows 7 համակարգչային ծրագրերին: Ամուսնացած չէ:



Բադալյան Կարապետ Սերյոժայի

Ծնվել է 26.11.1975 թվականին, Երևան քաղաքում: 1992 թվականին ավարտել է Երևանի թիվ 94 միջնակարգ դպրոցը: 1997 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 1997 թվականի հունիսին զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության և ծառայությունն անցկացրել է ԼՂՀ ՊԲ շարքերում: Զորացրվել է 1998 թվականի դեկտեմբերին: 2005-2007 թվականին սովորել և ավարտել է Հայաստանի Ամերիկյան Համալսարանի իրավաբանական բաժինը՝ ստանալով իրավունքի մագիստրոսի կոչում: 2007 թվականին ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր (թիվ 704), հանդիսանում է ՀՀ Փաստաբանների պալատի անդամ: 2008 թվականին սովորել է ԱՄՆ Թաֆթսի համալսարանի Ֆլետչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցում, ստացել ծրագիրն ավարտելու հավաստագիր: 2015 թվականի դեկտեմբերից մինչև 2017 թվականի հունվարը ուսանել և ավարտել է ԱՄՆ Չիկագո-Քենտ իրավունքի քոլեջի Ամերիկյան իրավունքի դպրոց Կովկասի համար ծրագիրը, ստացել է ավարտելու հավաստագիր:

1998 թվականի հունիսին նշանակվել է ՀՀ Գլխավոր դատախազության ԼՂՀ Մարտունու կայազորի զինվորական դատախազության քննիչ, այնուհետև 1999 թվականի հունիսին նշանակվել է Մարտակերտի զինվորական դատախազի օգնական և աշխատել է մինչև 1999 թվականի դեկտեմբերը: 2001 թվականի սեպտեմբերից մինչև 2005 թվականի սեպտեմբերը աշխատել է «Ռայթ-իրավաբանական խումբ» ՍՊ ընկերությունում՝ որպես իրավաբան, ապա՝ տնօրեն: 2007 թվականի հունիսից աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտում և նշանակվել ՀՀ տնտեսական դատարանի դատավորի օգնականի պաշտոնում: 2008 թվականի հունվարից աշխատել է ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնականի պաշտոնում, ապա նշանակվել նույն դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության ավագ մասնագետ և աշխատել է մինչև 2009 թվականի ապրիլը: 2009 թվականի ապրիլից մինչև հուլիս ամիսները աշխատել է «Կարախանյան և ընկերներ իրավաբանական գրասենյակ» ՍՊ ընկերությունում՝ որպես իրավաբան, ապա 2009 թվականի սեպտեմբերից աշխատանքի է անցել «Պրուդենս» ՓԲ ընկերություն իրավաբանական գրասենյակում՝ որպես փաստաբան-ավագ իրավաբան, որտեղ աշխատել է մինչև 2018 թվականի փետրվարը: 2014 թվականին աշխատել է ԱՄՆ Զարգացման գործակալության ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրով որպես փորձագետ, կազմել է զեկույց՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի և կիրառման պրակտիկայի խնդիրների մասին: 2014 թվականից մինչև 2016 թվականը աշխատել է Եվրոպայի Խորհրդի Հայաստանի գրասենյակի «ՀՀ Դատական համակարգի անկախության ամրապնդման, պրոֆեսիոնալիզմի և հաշվետվողականության» ծրագրի իրավաբան-փորձագետ: 2017 թվականի դեկտեմբերից առ այսօր հանդիսանում է Համաշխարհային Բանկի Միջազգային ֆինանսական կորպորացիայի Երևանյան գրասենյակի տեղական փորձագետ՝ օրենսդրության զարգացման և գործարար միջավայրի բարելավման ծրագրի շրջանակներում: 2018 թվականի փետրվարից առ այսօր աշխատում է «Օլթի Քոնսալթինգ» ՓԲ ընկերություն իրավաբանական գրասենյակում՝ որպես փաստաբան-տնօրեն: Ազատ տիրապետում է ռուսերենին և անգլերենին,

ֆրանսերենին՝ սահմանափակ: Տիրապետում է մի շարք համակարգչային ծրարգեր՝ MS Office բոլոր ծրագրերը, տեղեկատվական և փնտրողական համակարգեր, այդ թվում՝ մասնագիտական իրավաբանական: Ամուսնացած է, ունի երկու զավակ:



Սմբատյան Մառլեն Հովսեփի

Ծնվել է 23.12.1985թ. Երևան քաղաքում: 2005թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2009թ.՝ մագիստրատուրան: 2010-2012թթ. սովորել և ավարտել է Լոնդոնի թագավորական քոլեջի Լոնդոնի համալսարանը՝ ստանալով միջազգային առևտրային իրավունքի մագիստրոսի որակավորում: 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. սեպտեմբեր ամիսը աշխատել է ՀՀ ռազմական ոստիկանությունում՝ որպես կազմ-շարային բաժանմունքի սպա: 2012թ. մայիսից մինչև 2014թ. օգոստոս աշխատել է «Գրանտ թորնթոն լիգալ ընդ տաքս» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու: 2012թ. օգոստոսից մինչև 2014թ. դեկտեմբեր աշխատել է «Ամերիա» ՓԲԸ-ում՝ որպես իրավախորհրդատու: 2015թ. մայիսից մինչև 2018թ. հոկտեմբեր աշխատել է «Եվրոֆուտբոլ բուքմեյքերական ընկերություն» ՍՊԸ-ում՝ որպես իրավական գծով տնօրեն: 2019թ. մարտից մինչ օրս աշխատում է «ՄԲԱ Քնսալթինգ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 2014թ. մայիսից ՀՀ փաստաբանների միության անդամ է /արտոնագիր թիվ1808/: Տիրապետում է հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզուներին: Ամուսնացած է:



Մանուչարյան Մարտին Ալեքսանդրի

Ծնվել է 28.08.1988թ. Երևան քաղաքում: 2005-2009թթ. սովորել և ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան: 15.07.2010-19.08.2010թթ. աշխատել է Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ: 05.09.2010-14.03.2011թթ. աշխատել է "ՄԱՆԱ" ՍՊ ընկերությունում՝ իրավաբան: 2010-2013թթ. սովորել և ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան: 17.03.2011-20.09.2016թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական: 20.09.2011թ. շնորհվել է ՀՀ դատական ծառայության առաջին դասի դատական ծառայողի դասային աստիճան: 25.04.2015թ.-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ՝ փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 1908: 2015-2017թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայում՝ որպես քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս: 20.09.2016-01.08.2017թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ դատավորի ավագ օգնական: 20.09.2016թ. շնորհվել է ՀՀ դատական ծառայության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան: 23.12.2016թ. տրամադրվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ սնանկության գործով կառավարչի թիվ 0039 վկայականը: 06.07.2017թ. հիմնադրել է Մարտին Մանուչարյան Ա/Ձ, գործունեությունը սկսել է 01.08.2017թ. (գործունեությունը՝ փաստաբանական գործունեություն և սնանկության գործերով կառավարիչ): Ամուսնացած չէ:



Հարությունյան Նելլի Ղուկասի

Ծնվել է 05.01.1982թ. Երևան քաղաքում: 2003թ. ավարտել է «Գլաձոր» կառավարման համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ ստանալով իրավաբանի որակավորում: 01.10.2003-04.07.2008թթ. աշխատել է «Նուշիկյան» ասոցիացիա սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում՝ որպես իրավախորհրդատու: 01.09.2004-01.08.2005թթ.աշխատել է Երևանի Ակսել Բակունցի անվան պետական մանկավարժական քոլեջում՝ որպես դասախոս: 01.04.2007-31.07.2009թթ. աշխատել է «Էստո» ՍՊԸ –ում՝ իրավաբան (փաստաբան): 12.10.2009-14.06.2010թթ. աշխատել է «ԷԿԼՕՖ» ՈւՎԿ ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 15.06.2010-30.08.2010թթ. աշխատել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության բանկային ռիսկերի վերահսկողության դեպարտամենտում՝ իրավաբան, իսկ 30.08.2010-14.05.2012թթ.՝ կորպորատիվ բիզնեսի գծով գործարքների ձևակերպման բաժնի պետ: 14.05.2012-01.07.2015թթ. աշխատել է ՀՀ կառավարության «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ պետական հիմնարկում՝ օրենսդրական ակտերի նախապատրաստման մասնագետ, 01.07.2015-01.01.2016թթ.՝ տնտեսագետի ժ/պ, իսկ 01.01.2016-01.04.2016թթ.՝ գլխավոր մասնագետի պաշտոնակատար: 2016 թվականի ապրիլի չորսից մինչ այսօր աշխատում է ՀՀ փաստաբանների պալատում՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ: 2018 թվականի հոկտեմբերի մեկից հանդիսանում է նաև «Ար-Մեդիկա» ՍՊԸ տնօրենը: 2006 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, իսկ 2013 թվականի օգոստոսից՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ: Ամուսնացած չէ:



Նիկողոսյան Շուշանիկ Դերենիկի

Ծնվել է 11.06.1972թ. Երևան քաղաքում: 1989թ. ավարտել է Երևանի թիվ 74 միջնակարգ դպրոցը: 1998թ. ավարտել է Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանը՝ իրավագիտություն մասնագիտությամբ: 1989-1998թթ. աշխատել է «Ձորաղբյուր» արտադրական կոոպերատիվում՝ որպես բանվոր: 29.09.1999-01.06.2011թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական: ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի հրամանով շնորհվել է ՀՀ դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան: 10.06.2011թ.-ից հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաբան, փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 1154: 2011-2016թթ. աշխատել է «ԷՄ ՋԻ ԷՆ ՎԻ լոյերս գրուպ» ՍՊԸ-ում, «Սլասար» ՍՊԸ-ում, «ՅՈՒՐԷԿՍ» ՍՊԸ-ում՝ որպես փաստաբան: 04.05.2017թ.-ից - 11.09.2018թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական: Ներկայումս չի աշխատում: Ամուսնացած չէ:



Ահարոնյան Ռոմեն Դերենիկի

Ծնվել է 25.10.1983թ. Կապան քաղաքում: 2000թ. ավարտել է Կապանի թիվ 7 միջնակարգ դպրոցը: 2008թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը: 2011թ. ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան: 2008թ. մարտից մինչև 2009թ. փետրվարը աշխատել է «Գոլդեն Սփեյս» ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն-իրավաբան: 2009թ. փետրվարի 16-ին՝ նշանակվել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնականի պաշտոնում: 2009թ. օգոստոսի 19-ին՝ ստացել է ՀՀ դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան: 2009թ. սեպտեմբերի 22-ին՝ազատվել է պաշտոնից իր դիմումի համաձայն: 2010թ. հոկտեմբերի 1-ից՝ աշխատել է «Արնի Լեգալ Էյդ» փաստաբանական գրասենյակում՝ որպես իրավաբան: 2011թ. հոկտեմբերի 15-ին՝ ստացել է փաստաբանական գործունեության թիվ 1164 արտոնագիրը: 2011թ. հոկտեմբերի 20-ից՝ աշխատել է «Արնի Լեգալ Էյդ» փաստաբանական գրասենյակում՝ որպես փաստաբան: 2012թ. դեկտեմբերի 30-ին՝ազատվել է աշխատանքից իր դիմումի համաձայն: 2012թ. մարտի 1-ից՝ աշխատել է «Լեգալ Բրենդ» փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ում՝ որպես փաստաբան: 2013թ. հուլիսի 1-ին՝ ազատվել է աշխատանքից իր դիմումի համաձայն: 2013թ. օգոստոսի 6-ից գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր և իրականացնում է փաստաբանական գործունեություն: Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Արմենակյան Սարգիս Արմենի

Ծնվել է 23.12.1985թ. Երևան քաղաքում: 1992-2002թթ. սովորել է Երևանի Մովսես Խորենացու անվան թիվ 143 միջնակարգ դպրոցում: 2003-2008թթ. սովորել և ավարտել է Գավառի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 2008-2010թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում, ՀՀ ՊՆ Մարշալ Հովհաննես Բաղրամյանի անվան ուսումնական զորամասը ավարտելուց հետո ստացել է «Հետևակի մարտական մեքենայի հրամանատարի» կոչում և հետագա ծառայությունը անցել է ՀՀ ՊՆ այլ զորամասում: Հանդիսանում է պահեստազորի ավագ: Պարգևատրվել է «Քաջարի մարտիկ» և «Բանակի Գերազանցիկ» կրծքանշաններով: 2011թ. հոկտեմբերի 10-ից մինչև 2015թ. մայիսի 11-ը աշխատել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական: 11.05.2015 թվականից մինչև 25.12.2017 թվականը աշխատել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես աշխատակազմի ղեկավար: 25.12.2017 թվականից մինչև 01.11.2018 թվականը աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչութան պետի տեղակալ, դատական պրակտիկայի ամփոփման բաժնի պետ: 01.11.2018 թվականից առ այսօր աշխատում է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության Դատական պրակտիկայի վերլուծության բաժնի պետի պաշտոնում: 2016-2017թթ. և 2017-2018թթ. դատական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստման դասընթացների արդյունքները գնահատելու համար ընդգրկված է եղել ՀՀ արդարադատության ակադեմիայի քննական հանձնաժողովի կազմում: 2018 թվականից հանդիսանում է ԳԱԱ «Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի» ինստիտուտի հայցորդ: 29.06.2015թ. ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի հրամանով շնորհվել է դատական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան: Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Խաչատրյան Սերինե Սերյոժայի

Ծնվել է 14.10.1988թ. Երևան քաղաքում: 1995-2005թթ. ուսանել է Երևանի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան թիվ 66 միջնակարգ դպրոցում: 2009թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը: 2011թթ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան: 2010-2012թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում՝ որպես փորձագետ: 2012-2014թթ. աշխատել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունում՝ որպես իրավախորհրդատու: 2014-2015թթ. աշխատել է «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպությունում: 2015-2018թթ. աշխատել է «Լուգերա և Մակլեր» ՍՊԸ-ում, այնուհետև «Էլ.ԷՄ. Աութսորս» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 2018-2019թթ. աշխատել է «ՎԱՐԿՍ ԷՅ ԷՄ» ՈՒՎԿ ՓԲԸ-ում՝ որպես գլխավոր իրավաբան: 2015թ.-ից հանդիսանում է ՀՀ Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան: 2016-2017թթ. իրականացրել է հետազոտություն կենսաթոշակի իրավունքի վերաբերյալ և հեղինակել է «Կենսաթոշակի իրավունքի պաշտպանության մեխանիզմների կատարելագործում» հեղինակային աշխատությունը (Երևան, 2017թ.): 2017թ.-ից ՀՀ Փաստաբանների պալատում իրականացնում է փաստաբանների վերապատրաստում՝ «Կենսաթոշակի իրավունքը և վերջինիս պաշտպանությունը» թեմայով: 2018թ. նոյեմբերից մինչ այժմ իրականացնում է հետազոտություն սոցիալական իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև զբաղվում է փաստաբանական գործունեությամբ: Ամուսնացած է, ունի երկվորյակ դուստրեր:



Աբովյան Սիմա Լևոնի

Ծնվել է 17.06.1983 թվականին Երևան քաղաքում: 2000-2005թթ. գերազանցությամբ ավարտել է Երևանի «Գալիք» Համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ իրավագետի որակավորմամբ: 2007-2009թթ. գերազանցությամբ ավարտել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայի իրավագիտության ֆակուլտետը՝ իրավագիտության մագիստրոսի որակավորմամբ: 10.03.2008 - 01.11.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար: 09.01.2012 -03.05.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար: 12.09.2012 - 26.10.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 16.10.2010 թվականին ստացել է ՀՀ Փաստաբանների պալատի փաստաբանական գործունեության թիվ 984 արտոնագիրը, որի գործողությունը, համաձայն իր դիմումի, կասեցվել է: 01.11.2012 թվականից մինչև 31.05.2013 թվականն աշխատել է «Իրավական եռանկյունի» ՍՊԸ-ում, որպես իրավաբան: 07.06.2013 թվականից մինչև 25.01.2018 թվականն աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 26.01.2018 թվականից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական, շնորհվել է Հայաստանի Հանրապետության դատական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: Ամուսնալուծված է, ունի երկու երեխա:



Պողոսյան Սյուզաննա Ստյոպայի

Ծնվել է 17.03.1980թ. Երևան քաղաքում: 1997 թվականին ավարտել է Երևանի թիվ 113 դպրոցը, գերազանց առաջադիմությամբ՝ շնորհվել է ոսկե մեդալ: 2001թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2003թ. Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան՝ «Քաղաքացիական իրավունք» մասնագիտացմամբ: 2009թ. սովորել է «Թաֆթս» համալսարանի «Ֆլեթչեր»-ի դիվանագիտության և իրավունքի դպրոցում, մասնակցել է «Միջազգային իրավունք և դիվանագիտություն» խորագրով դասընթացին: 2001-2004թթ. աշխատել է «Ֆուլ Պրես» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 2004-2005թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչությունում՝ կամավոր:2005-2007թթ.՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչությունում՝ որպես առաջատար մասնագետ: 2007-2008թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական, շնորհվել է դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան: 2009-2011թթ.՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմում՝ իրավաբանական բաժնի պետ: 2012-2017թթ.՝ «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու: 2013 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ՝ փաստաբան (արտոնագիրը կասեցված է): 2014 -2017թթ.՝ <<Լեքսարթ>> փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն: 2017 թվականի հոկտեմբերի 16-ից աշխատում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովում՝ որպես իրավաբանական և վարույթների վարչության պետ (2019թ.՝ հանդիսանում է նաև ՀՀ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամ): Մասնակցել է մասնագիտական մրցույթային դասընթացների՝ 2004թ.-ին ՀՀ Կենտրոնական բանկում՝ «Կենտրոնական բանկ ներածական դասընթացին»: 2010թ. մասնակցել է «Անհատական տվյալների պաշտպանությունը Հայաստանում և Եվրոպական Միությունը», Տնտեսական քաղաքականության և իրավական հարցերով հայ-եվրոպական խորհրդատվության կենտրոն (AEPLAC) մրցույթային դասընթացներին: 2010թ.-ին Երևան քաղաքում մասնակցել է Ժնևի

համալսարանի կողմից կազմակերպված (The Graduate Institute Geneva) «Միջազգային հարաբերություններ, մարդու միջազգային իրավունքներ և շրջակա միջավայր» դասընթացին, 2017թ. Ֆրանսիայում՝ «Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա», Ստրասբուրգում՝ Բաց հասարակության հիմնադրամ (OSI, CPI) մրցույթային դասընթացներին: Անկուսակցական է: Տիրապետում է անգլերեն և ռուսերեն լեզուներին: Ամուսնացած է ունի մեկ որդի և մեկ դուստր:



Աբգարյան Էմին Ռուբիկի

Ծնվել է 20.06.1984 թվականին Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում: 1990-2000թթ. ավարտել է Գավառ քաղաքի թիվ 8 միջնակարգ դպրոցը: 2000-2005թթ. սովորել է Գավառի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, ավարտել գերազանցությամբ, ստացել է իրավագետի որակավորում: 2005-2008թթ ավարտել է ՀՀ ԳԱԱ-ի Փիլիսոփայության, սոցոլագիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրան: 2008թ. ՀՀ կառավարման ակադեմիայում գործող ՀՀ ԲՈՀ-ի իրավագիտության 041 մասնագիտացման խորհրդում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ԺԲ.00.04 «Հատուկ վարույթները վարչական դատավարությունում» թեմայով և ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 09.2005-06.2006թթ. աշխատել է Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի գրասենյակի գործավար: 09.2006-01.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի աշխատակազմի արխիվապահ, ՀՀ դատական ծառայության առաջին դասի կրտսեր ծառայող: 09.2009-03.2011թթ. աշխատել է Երևանի «Գալիք» համալսարանում՝ որպես իրավագիտության ֆակուլտետի դասախոս: 09.2009-06.2014թթ. աշխատել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ որպես դասախոս /գիտական խորհրդի անդամ/: 09.2009-09.2016թթ. աշխատել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավագիտության և նրա մեթոդիկայի դասավանդման ամբիոնի դասախոս, դասավանդել է «Հայաստանի քաղաքացիական դատավարության իրավունք» առարկան: 01.2018 թվականից մինչ օրս աշխատում է ՀՀ Պետական եկամուտների կոմիտե «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ որպես դասախոս, դասավանդում է «Սննանկության վարույթի առանձնահատկությունները» և «Իրավաբանական անձանց կարգավիճակը և առանձնահատկությունները» առարկաները: 01.2012-09.2012թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ՝ ՀՀ քաղաքացիական ծառայության 3-րդ դասի խորհրդական:

09.2012-01.2015թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի պետ՝ ՀՀ քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդական: 01.2015-02.2017թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության չորրորդ բաժնի պետ: 02.2017 թվականից մինչ օրս աշխատում է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողության ծառայության չորրորդ բաժնի պետ՝ ՀՀ քաղաքացիական ծառայության առաջին դասի խորհրդական: 19.09.2015թ. պարգևատրվել է ՀՀ արդարադատության նախարարի շնորհակալագրով: 2009-2018թթ. հանդիսանում է հանրային խորհրդի պետաիրավական հարցերի հանձնաժողովի դատարանների, դատախազության և քննչական մարմինների հարցերով ենթահանձնաժողովի անդամ: 08.2017-ից մինչև 06.2018թթ. հանդիսացել է ՀՀ վարչապետի թիվ 886-Ա որոշմամբ՝ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ: 2010-2012թթ. հանդիսացել է «Դատական ծառայողների միություն» ԱԿ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի ներկայացուցիչ-անդամ: Տիրապետում է հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուների: Տիրապետում է Windows, Word, MC office, Internet համակարգչային ծրագրերին: Ամուսնացած է: